

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԸԱՅՏՆԻՆ ԵՎ ՆՈՐԱԸԱՅՏԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ԸԱՅԱՍՏԱՆԻ»

ՎԵՊԻ ՆՈՐ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ¹

Տակավին 1893-ին «Տարագ» հանդեսում Ալեքսանդր Շիրվանզադեն, անդրադառնալով Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Ասլան Բալասի» վերնագրով բեմականացմանը, գրել է. ««Վերք Հայաստանի»-ն հայտնի է բոլոր հայերին, որ կարդալ գիտեն...»²: Գրողի այս նկատումը Վերքի հոգեւոր-մշակութային, ազգային-հանրային պատմական եւ իր ժամանակի հարացույցներում, կարող ենք անվարան հավելել՝ առհասարակ հայոց հոգեւոր-մշակութային համապատկերում տիրապետող ներկայություն (ինչպես նաեւ դոմինանտ արժեք) լինելու առարկայական արձանագրությունն էր: Հայկական միջավայրը ներփակող ամբողջական համագրում ստեղծագործության բացարձակ հանրաճանաչության փաստումը:

Անշուշտ Աբովյանը եւ նրա գործի ու ստեղծման խտացում-այցեքարտ Վերքը հայության քաղաքակրթության նոր դարաշրջանի ամենահայտնի երեւույթն է: Շիրվանզադեի սահմանման հանգույն՝ արձանագրությունն անպայմանորեն ներառում էր ո՛չ միայն այս անմահ ստեղծագործության ներփակ (իմանենտ) պատմա-գործառական դերակատարությունը, այլ նաեւ Աբովյանի՝ իբրեւ մեծ լուսավորիչի, հանրագիտակի, մանկավարժի, գաղափարախոսի, մտածողի, ազգային-հանրային գործիչի, գեղագետի, նոր գրականության հիմնադիրի հանգամանքները: Ասել է թե՛ Շիրվանզադեի հիշատակված դիտարկում-սահմանումը Աբովյանի բացարձակ հանրաճանաչությունը, տիրապետող ներկայություն լինելը, նրա կյանքն ու գործը որպես օրինակելիի, չափորոշիչայինի յուրօրինակ սիմվոլացումն էր հայ հանրության կողմից: Այն հիմնարար եւ ամբողջական «նախածեւը», ում կյանքի, գործունեության, ժառանգության վերաներկայացումը, վերակրկնությունը հոգեւոր-մշակութային, ազգային-հանրային դաշտերում ընթացք ապահովող անհրաժեշտ թելադրանք է:

Պատահական չէ, որ ետաքրվյաճական առաջին իսկ շրջափուլից (օրինակ՝ Նալբանդյան, Պողոջյան, Ոսկան, Սըվաճյան, Թումանյան, Իսահակյան) մինչեւ XX դար (օրինակ՝ Չարենց, Բակունց, Դեմիրճյան, Հակոբ Օշական), մինչեւ մեր օրեր Աբովյան եւ Վերք երեւույթների փորձընկալումը, արվյաճական գործի վերաներկայացումը եւ վերակրկնությունը (ինքնին հասկանալի է, որ վերաներկայացում-վերակրկնությունը արվյաճական ֆենոմենի կրավորական «նմանահանությունը» կամ նմանողությունը չէ, համեմայն դեպս այդօրինակ իրողությունները նկատի չունենք, այլ՝ իմացական-ստեղծաբանական-փիլիսոփայական-գեղագիտական փորձընկալումը) հոգեւոր-մշակութային, իմացական-մտածական, մտավորական դաշտերում արդիական է եւ հրատապ:

Անշուշտ Ալեքսանդր Շիրվանզադեի սահմանման մնամվող արձանագրության մեջ պետք է նկատի ունենալ, որ առկա է նաև այն ելակետումը, թե արքայաճանկան տարրողությամբ հայտնին, հանրաժանությամբ ցանկացած ժամանակի, շրջանի եւ յուրաքանչյուր սերնդի համար առբերում է նորը, նորահայտը: Այս նորահայտով է ապահովագրում իր հայտնի լինելը:

Ասել է թե՛ արքայաճանկան երեւոյթն առհասարակ, Վերքն ի մասնավորի հայտնի էր եւ է, որովհետեւ անընդհատ ընթերցման-ըմբռնման-փորձընկալման, մեկնաբանման եւ արժեքորման տիրոյթներում երեւան էր բերում եւ բերում է նորը, ըստ այսմ՝ նորահայտ էր եւ է: Ահա եւ այս առումով Վերքի խնդրո առարկա հրատարակութիւնը հայտնիի նորահայտ-ացման հերթական, միանգամից ասենք՝ արգասավոր դրսեւորումն է, սակայն նորահայտ՝ նաեւ ուղղակի, բառարանային իմաստով, ինչին սույն հոդվածի համապատասխան բաժնում դեռ կանոնադաշտնանք:

Սկենելով ունեցած դերակատարութիւնից՝ խաչատուր Աբովյանի ժառանգութեան գիտական հրատարակութիւնը եւ ուսումնասիրութիւնը միշտ արդիական, հրատապ եւ անհրաժեշտ գերակայութիւն է եղել եւ է հումանիտար մտքի համար: Բոլորովին պատահական չէ, որ այսօր ունենք գրեթե 150 տարվա արքայաճանկանութիւնը՝ մեկնակետ ընդունելով 1858-ի Վերքի առաջին տպագրութիւնը (ճշգրտորեն՝ հարյուր քառասունութ տարվա): Շուրջ դար ու կես ժամանակահատվածում հրատարակվել եւ վերահրատարակվել են մեծանուն լուսավորիչի բազմաթիվ երկեր: Գիշտ է, այսօր գրեթե անմատչելի եւ հազվագյուտ, սակայն լույս է տեսել Աբովյանի երկերի տասնհատորյակը, ստեղծվել են հիմնարար ուսումնասիրություններ՝ նրա կյանքի, գործի, ժառանգության մասին: Թերեւս, առանց չափազանցելու, կարող ենք վկայել, որ Աբովյանը հայոց նոր եւ նորագույն գրականությունների ամենամեքերված, հոլված, վկայակոչված հեղինակն է, ըստ մեքերումների դասիչի՝ միանձնյա առաջատարը:

Հայոց նոր գրականության հիմնադիրի, մեծանուն լուսավորիչի, հանրագիտակի գրական, փիլիսոփայական, գեղագիտական, լեզվաբանական, բանասիրական, մանկավարժական, պատմագիտական, ազգագրական, բնագիտական ժառանգությունը, նրա կյանքն ու գործունեությունը վաղուց անտի ջննդության եւ ուսումնասիրության կիզակետում են: Կարելի է ասել՝ խաչատուր Աբովյանի կյանքն ու ժառանգությունը համակողմանիորեն, համապատկերային շրջանակով հետազոտվել է (անպայմանորեն երախտագիտությամբ պետք է հիշենք երջանկահիշատակ Պիոն Հակոբյանին), ըստ էության քննական անդրադարձման է ենթարկվել նրա կյանքի եւ ժառանգության ամբողջական համաժիրը՝ կենսագրությունից (ուսումնառություն էջմիածնում, Թիֆլիսում, Դորպատում, մանկավարժական գործունեություն Թիֆլիսում ու Երեւանում եւ այլն) մինչեւ հարուստ եւ բազմազան ժառանգություն (մանկավարժական երկեր, գեղարվեստական գրականություն, գիտական ուսումնասիրություններ): Անշուշտ Աբովյանի կյանքը, գործունեությունը, ժառանգությունը հայագիտության համար անսպառ շտեմարան է, եւ նա վստահաբար միշտ լինելու է գիտական փորձընկալման տիրոյթներում, ինչը նրա հանճարի, Սարինյանի դիպուկ բնութագրմամբ՝ «ազգա-

յին ոգու կերպարանք առած մարգարեի»⁴ ստեղծման տարերքն է:

Այս խորքում գերակայելի է հաչատուր Աբովյանի գրական ժառանգության դերակատարությունը: Գրականություն, որ հիմնադրեց եւ ուղենշեց հայոց նոր գրականությունը, ազգային գրականության շրջարկում հաստատագրեց ժանրային համակարգ: Իսկ այդ շրջարկում էլ անբավելիորեն բացառիկ է «Վերք Յայաստանի» վեպի գրական-գեղարվեստական, ստեղծաբանական-մշակութաբանական դերն ու համընթացությունը հայոց գրականության պատմության նոր դարաշրջանի համար: Ստեղծագործություն, որով Դերենիկ Դեմիրճյանի խորիմաստ դիտարկմամբ «Աբովյանը գտավ Աբովյանին «Վերք Յայաստանի»-ով, հայտնագործեց իրեն»⁵:

Իրապես, դեմիրճյանական դիտարկումը միանգամայն իրավացիորեն արձանագրում է այն ելակետը, թե Աբովյանի գործի եւ ստեղծագործության ստեղծաբանական, մշակութաբանական, իմացական-գիտական փորձընկալումն ըստ էության նույնականացվում է Վերքի փորձընկալմամբ:

Յանրահայտ է եւ տեսաբանության, գրականության պատմագրության կողմից վաղուց անտի անքննելի աքսիոմի տարողություն ստացած այն իրողությունը, որ հաչատուր Աբովյանի գրական ժառանգության յուրաքանչյուր/ցանկացած արտահայտություն/երկ հայոց նոր գրականության պատմական հարացույցում առանձնանում է սկզբնադիրի գործառությամբ, մշակութաբանական-ստեղծաբանական դաշտում նախադեպ ստեղծելու տարերքով, նախադեպի երեւույթով, գեղարվեստական փոքր արձակ լինի (հիշեցնեմք, օրինակ, «Օվսաննա»-ն նոր գրականության առաջին նորավեպը) թե գեղարվեստական օրագրություն, այսպես կոչված միջժանրային ձեւեր (օրինակ՝ առակ, մանրադեպ) թե պոեզիա (անկախ նախաբովյանական կամ արբովյանական ժամանակաշրջանում կիրարկումից, ինչպես է պոեզիայի պարագան՝ կլասիցիստական, սենտիմենտալ-ռոմանտիկական բանաստեղծությունների համապատկերում, Աբովյանի բանաստեղծությունը նշվածի տիրույթներում է, թեւ հայոց կլասիցիստական, սենտիմենտալիստական-ռոմանտիկական, դիդակտիկ-լուսավորական բանաստեղծությունը մինչ Աբովյանն արդեն իր նախաքայլերն արել էր):

Յարահայտ եւ աքսիոմատիկ է «Վերք Յայաստանի» վեպի բացառիկ դերակատարությունը հայոց նոր գրականության հիմնադրման եւ սկզբնադրման մեջ: Վերքն իբրեւ մուտք, ելման կետ, սկիզբ գիտակցվել եւ իրավացիորեն ընկալվել է ստեղծագործության լույս ընծայումից ցարդ ե՛ւ գրականության, ե՛ւ թե տեսաբանության-քննադատության կողմից: Ասել կուզի՝ հայոց գրաբանական դաշտը, մեկնելով Վերքի կառուցաբանական-կազմաբանական, բառապատկերային, գեղարվեստական-գեղագիտական, մշակութաբանական-քաղաքակրթական շրջարկներից առարկայաբար գիտակցել եւ գիտակցում է գրականության ժամանակի պատմական հոլովություն ստեղծագործության համընթացությունները: Իսկ յուրաքանչյուր սկզբնադիր, հիմնադիր երկ թելադրական է դարձնում ցանկացած (ամեն մի) ժամանակահատվածում գրողի, քննադատի, ընթերցողի, առհասարակ գրական դաշտի կողմից այդ ստեղծագործության սեփական փորձընկալումը: Յետեւաբար այդօրինակ երկը սնընդիատ մնում/լիճում/հաճում է արդիական:

Վերքի դերակատարությամբ մուտք/սկիզբը անընդհատ գիտակցվում է փորձընկալվում է, սկզբնադիր լինելու, հիմնադիրի երեւոյթը անընդհատ հայտնաբերվում է հաստատվում է, ըստ այսմ վերահայտնաբերվում է վերահաստատվում յուրաքանչյուր գրողի եւ ցանկացած գրական միջավայրի կողմից՝ անկախ նախորդների հաստատումներից: Միայն այս ընթացքն անցնելուց հետո է այն վերակրկնում իր համեմատությունը: Իսկ համրահայտ, արքիոմատիկ իրողություն է, որ ցարդ Վերքը պահպանում է իր այս բացառիկ մասնահատկությունը: Հետեւաբար Արուստանի այս ստեղծագործության փորձընկալում-ընթերցում-մեկնություններն իրենց ամբողջական համագրով մեր գրականության եւ տեսաբանության մշտամնա հաստատունն են, ինչը ուղղակիորեն պայմանավորված է Վերքի մշտամնա հաստատուն լինելու երեւոյթով: Ունենք այս օրինաչափության բազմաթիվ գրապատմական եւ ժամանակակից վկայություններն ու հաստատումները՝:

Ասել է թե՛ յուրաքանչյուր գրող, քննադատ, առհասարակ ընթերցողական դաշտի ցանկացած ներկայացուցիչ առարկայաբար ունի Վերքի սեփական (անհատական) փորձընկալման պահանջն ու փորձառությունը: Այդպես է եղել «Վերք Հայաստանի»-ով սկզբնավորված հայոց նոր գրականության պատմական բոլոր փուլերում՝ Պոռշյան-Աղայանից մինչեւ Թումանյան-Իսահակյան, Վարուժան-Օշակյանից մինչեւ Հարենց-Բակունց, այդպես է ժամանակակից գրականության շրջանում:

Ավելին, ոչ միայն գրական-մշակութային, այլեւ մտավոր-իմացական դաշտի յուրաքանչյուր ներկայացուցիչ անցյալում եւ այժմ Վերքի գեղարվեստական, փիլիսոփայական, գեղագիտական, մշակութաբանական, ստեղծաբանական փորձընկալումը միանգամայն իրավացիորեն գիտակցում է որպես սեփական կայացման պարտադիր հրամայականներից մեկը:

Անշուշտ արդեն այս հանրահայտ իրողությունների գերհամառոտ ուրվագրումը վկայում է խնդրո առարկա բնագրի անմախաղեպ գերհագեցվածությունը՝ նկատի ունենալով երկի բոլոր շրջարկները: Անշուշտ նաեւ «Վերք Հայաստանի»-ի նորմատիվ եւ գիտական ընթերցումները ենթադրում են գեղարվեստական-ստեղծագործական, իմացական փորձառության համապատասխան կուտակումներ: Միեւնույն ժամանակ Վերքն ինքնին իրեն գեղարվեստական համակարգ ցուցանում է անընդհատական կուտակումներ ընթերցող ցանկացած սուբյեկտի յուրաքանչյուր նոր ընթերցում հանգեցնում է ստեղծագործության ընկալման/ըմբռնման արձատականորեն նոր հանգրվանի: Այդպես է երկի նորմատիվ եւ գիտական ընթերցումների անցյալ ժամանակների, ներկայի, վստահաբար նաեւ ապագայի հույսով պայմանավորված:

Այսպիսով՝ հայ գրականության ամենահանրահայտ ստեղծագործությունը յուրաքանչյուր նոր (հերթական) ընթերցումով հանգում է նորահայտի, հայտնին փոխակերպում նորահայտի՝ դրսեւորելով հայտնի-նորահայտ-ի նաեւ այս համագիրը:

Հայոց նոր գրականությունը հիմնադրող-սկզբնադրող այս բացառիկ, կոթողային երկի ստեղծագործական պատմությունը նույնպես բացառիկ, նշանակա-

լի է հորինման, գրման, ստեղծագործական պատմությունների հարացույցում: Վերքի ստեղծագործական պատմության հիմնարար-ակադեմիական ուսումնասիրությունն այսօր շնորհիվ վաստակաշատ արովյանագետ Պիոն Չակոբյանի մեր տեսաբանության սեփականությունն է: Չայտնի է, որ խաչատուր Աբովյանը գրեթե երկու տասնամյակ (ըստ Չակոբյանի՝ «ավելի քան տասնհինգ տարի»⁴⁾) ստեղծագործական երեակայության տիրույթներում, տարբեր գործերի մեջ բնագրային անդրադարձումներով հղացել, բովանդակային եւ կառուցաբանական որոնումներով եւ տարբերակներով նախապատրաստել եւ շարադրել է երկը: Աբովյանագիտությունը Վերքի ստեղծման ավարտը հասցնում է մինչեւ 1845-ը՝ միասնամանակ արձանագրելով, որ գրման հիմնական ժամանակահատվածը 1841-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներն են:

Ինքնին հասկանալի է այն իրողությունը, որ վեպի առաջին հրատարակությունից իսկ հայոց տեսաբանական միտքը պետք է սկսեր այս կոթողային ստեղծագործության մեկնաբանական վիթխարի համաժիր պարփակող քննաբանության շրջանը: Գրեթե 150 տարվա պատմություն ունեցող վերքագիտությունը նշանակալի հանգրվաններ է ունեցել՝ սկսած Ստեփան Ոսկանի 1859-ին «Արեւմուտը» հանդեսում ըստ էության առաջին անդրադարձից, մինչեւ Սիքայել Նալբանդյան, ապա եւ Դերենիկ Դեմիրճյանի հուլիս կարելուր «Խաչատուր Աբովյանի գրական ժանրերը» ուսումնասիրությունը, մինչեւ մեր օրերը՝ Սերգեյ Սարինյանի արդեն հիշատակված երկու հետազոտություններով, որտեղ ոչ միայն ուրվագրված, մեկնաբանված է վերքագիտության բոլոր կարելուր հանգրվանները, այլեւ առաջադրված վեպի մեկնաբանության նոր կոնցեպցիա⁵:

Վերքի հետազոտական արդիականության եւ հրատարակության հրամայականը առարկայաբար ցուցանում է, որ հայ նոր գրականության այս կոթողային ստեղծագործությունը ոչ միայն իր գեղարվեստական-գեղագիտական, ստեղծաբանական-փիլիսոփայական շերտերով պարփակվում է զուտ գրականության տիրույթներում, այլեւ մատնանշում է մեր մշակութաբանական, քաղաքակրթային, կենսափիլիսոփայական ինքնությունը պայմանավորող ելակետային, հանգուցային, կարող ենք առանց վարանելու նշել նաեւ՝ հիմնատարային տարրերը⁶:

Աբովյանագիտությունը (վերքագիտությունը) խնդրո առարկա շրջարկը պարփակող բոլոր իրողությունները քննել եւ մեկնաբանել է, եւ վստահ ենք, որ թե՛ այժմ եւ թե՛ ապագայում քննելու եւ մեկնաբանելու է, քանի որ Վերքն իր մասնահատկությամբ, ինչպես ասացինք, խթանում է անընդհատականություն ինչպես ընթերցման, այնպես էլ մեկնաբանման-արժևորման տիրույթներում: Ասել է թե՛ այս ստեղծագործության ընթերցողական եւ գիտական փորձընկալումը հայտնին միշտ նորահայտի է հանգեցնում, առարկայաբար առաջադրում հայտնի/նորահայտի հրամայականը:

Արդ, այս հրամայականը եւս մեկ անգամ ընդգծելու համար արագորեն ճեպագրենք հանրահայտ մի քանի իրողություններ եւս:

Վերքի հայրական ստեղծաբանական-մշակութաբանական, իմացական միջավայրում ֆեոդոնալ հարակալությունը միանգամայն իրավացիորեն համա-

նույնացվել է «Սասնա ծռեր»-ի հետ: Աբովյանի ստեղծագործությունը նոր ժամանակների մեր էպոսն է, դյուցազներգությունը: Էպոսին, դյուցազներգությանը բնորոշ, Իսահակյանի բնութագրմամբ «տարերային-տիտանային պեղածենրով», բացառիկ բազմաձայնությամբ, սիմֆոնիզմով: Նոր գրականության համար համանվագայնության նախադեպի ամրագրմամբ, ինչը Վարպետը դիպուկ բնութագրել է իրեն «կոսմիկական երաժշտություն, օրատորիաներ»¹¹:

Վերջը գիտակցվել ու գիտակցվում է իրեն նոր ժամանակների Նարեկ, ասել է թե՛ որպես գրական աղոթամատյան, պատգամախոսություն: Պատահական չէ երկի հորենական գոյութենական-ստեղծաբանական տարերքը (կիրարկում ենք Տերունյանի աղոթքի համանունությամբ): Այս հորենական ստեղծաբանական տարերքը, բնագրաստեղծ հիմունքը համասփված է ստեղծագործության առաջաբանի՝ համրությունից ազատագրում վասն հոր, հորենական սկզբի ամրագրում որդիական սիրով, մինչև «Ձանգի» վերջաբանը՝ հայրազգ նույնականություն, հորենական կոսմոսի հայտնաբերում, մահ/անմահություն վասն հոր:

Իսախատուր Աբովյանի այս անմահ ստեղծագործությունն իր ամենատարբեր համադրություններով¹² նոր գրականության համապատկերում գեղարվեստական համակարգի օրինակելի մոդել ստեղծեց:

Առաջին հարցքից կարող է տարօրինակ կամ, գուցե, պարադոքսալ ինչի, սակայն հարկ է ընդգծել, որ Վերջն իր կառուցաբանական-հղացական համագրով, բնագրաստեղծ հիմունքներով, պատկերային համակարգի գործառություններով, անգամ վերնագրային կազմաբանությամբ հայկական մոդեռնի եւ պոստմոդեռնի կատարյալ արքեսիպն է: Այս իրողությունը, հար եւ նման հորենական սկզբունքի, կարծում ենք, մի առանձին ուսումնասիրության նյութ է: Նշենք սոսկ ժանրի սահմանների եւ ինքնացնող հատկանիշների ապակառուցումը ստեղծագործության շրջարկում, անթաքույց հարաբերականությունը (ռեյատիվիզմը): Իրողություններ, որոնք մոդեռն/պոստմոդեռնի գրականությանը բնորոշ երևույթներ են:

Վերջի հայտնատեսական առաքելությունը/դերականատարությունը մեր գրականության, առիասարակ ստեղծումի, մշակութաբանական-իմացաբանական էպոխալ առումով նորի սկզբնադրման գործում վաղուց անտի փաստված է նախ գրականության նոր լեզվի հիմնադրման, սկզբնավորման հանգամանքով. «փակ», «կարծ» լեզվի (Աբովյանի բնորոշումներից են երկի «Հառաջաբան»-ում) պատնեշների հաղթահարմամբ: Աշակերտի համար անգամ հայտնի գրականության պատմության այն սահմանումը, թե Աբովյանը մեր նոր գրականության հիմնադիրն է, պայմանավորված է գրական, գեղարվեստական բնագիր ստեղծելիս նոր լեզվական կիրարկումով: Այս լեզվական կիրարկման բառի դրական տարողությամբ մոգական դյութանքն էր, որ Աբովյանի սաներին, Ղորպատի հայ ուսանողությանը, Վերջի առաջին հրատարակիչ Ղովսեսի Գաբրիելյանին խթանեցին իրականացնելու վեպի առաջին տպագրությունը 1858-ին: Ահա եւ ստեղծագործության տպագրության գրեթե 150-ամյա պատմության¹³ ընթացքում երկն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ¹⁴, սակայն արվյա-

նական հառաջիկա հորեյաններին ընդառաջ¹⁶ ստեղծագործության ներկա տպագրությունը ոչ միայն հասկանալի վերահրատարակություն է, այլև կարելի էր երեւոյթ Վերքի, առհասարակ արժանագիտության պատմության մեջ:

Իրապես, ԳԱԹ-ի կողմից հրատարակած, Գուրգեն Գասպարյանի կողմից բնագիրը հրատարակության պատրաստած, Պիոն Զակոբյանի առաջաբանով, ծանոթագրություններով Վերքի սույն տպագրությունը ստեղծագործության հերթական հրատարակությունն է, այլ նշանակալի, լուրջ հավելում արժանագիտության մեջ: Այստեղ արձանագրենք նաեւ ստեղծագործության բարձրորակ, շքեղ եւ բարձրաճաշակ տպագրությունը, ինչը, վստահաբար, պակաս կարելու իրողությունն է:

Վերքի ներկա հրատարակությունը բացվում է Գուրգեն Գասպարյանի «Վերք Զայաստանի» վէպի ինքնագիրը որպէս աշխարհաբար գրական լեզուի արձանագրութիւն» խոսուց վերնագիր ունեցող բնագրագիտական հետազոտություն-ներածականով, որին հաջորդում է Պիոն Զակոբյանի «Խաչատուր Աբովեանը եւ նրա «Վերք Զայաստանին» առաջաբանը: Ստեղծագործության բնագրից հետո իբրեւ հավելված գետեղված է սփյուռքահայ բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր, մանկավարժ, ազգային-հանրային գործիչ Զմայակ Ծենսի Վերքի «Հառաջաբան»-ի արեւմտահայերեն փոխադրությունը, նրա հեղինակած «Մեծ ազգ՝ երեք մատնանով (ուրուագիծ)» հոդվածը, «Հառաջաբան»-ի անգլերեն թարգմանությունը, որ կատարել են Վահե Պալատունին եւ Զոն Զերին: Հատորը փակվում է Պիոն Զակոբյանի հեղինակած ծանոթագրություններով, նրա (մասնակիորեն նաեւ Գուրգեն Գասպարյանի հավելումներով) կազմած բառարանով եւ մատենագիտական տեղեկություններով: Հավելենք նաեւ, որ այս շքեղաշուք հրատարակությունն իրականացվել է Զմայակ Ծենսի գարմիկ, ԱՄՆ Նյու Օռլինզի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Վահե Պալատունու հովանավորությամբ, որին պետք է իրենց շնորհակալությունը հայտնեն նաեւ գրքի բոլոր ընթերցողները:

Գուրգեն Գասպարյանը, իր ներածական-ուսումնասիրության մեջ ամփոփելով Վերքի ծեռագրագիտական-բնագրագիտական քննությունը, իբրեւ եզրակացություն գրում է. «Մենք հետեւել ենք Աբովեանի ինքնագրին՝ պահպանելով հեղինակի ուղղագրական բոլոր ձեւերը, կէտադրութիւնը, շարադրանքի կառոյցը՝ հնարատրինս խուսափելով որեւէ միջամտութիւնից: Այս առումով «Վերքի» քննագիրը առաջին անգամ է լոյս տեսնում այնպէս, ինչպէս գրել է Աբովեանը»¹⁷ (ընդգծումը մերն է Գր. Դ.):

Հետեւաբար հարկ է փաստել, որ ստեղծագործության այս հրատարակությունն առաջին անգամ ընթերցողին, տեսաբանությանը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու, կարդալու եւ ուսումնասիրելու Վերքի միջամտությունների չենթարկված, առանց որեւիցե միջամտության, անաղարտ¹⁷ տարբերակը: Այսինքն՝ հայտնի բնագիրն ըստ էության սույն տպագրությամբ նորահայտ բնագրի արժեք ունի: Ասել է թե՛ ունենք երկի գիտական, ակադեմիական երկորդ (հաշվի առնելով Աբովյանի երկերի ժողովածուի առաջին հրատարակությունը, ինչը նույնպէս գիտական էր) ճշգրտված հրատարակությունը, ինչը ան-

չափ կարելու է հատկապես արժվանագիտության, երկի հետազոտական շրջարկը ներփակող բոլոր աշխատանքների համար:

Անշուշտ արժվանագիտությունը հսկայական աշխատանք է կատարել Աբովյանի ձեռագրերի, մասնավորապես Վերքի բնագրագիտական հետազոտության ասպարեզում: Ընդդիմ վաստակաշատ Պիոն Դակոբյանի՝ մանրագին քննության եմ ենթարկվել վեպի տարբերակները, այսպես կոչված ստեղծագործության առաջին չափածո տարբերակը, նախագիրը, երկրորդ արձակ տարբերակը՝ երկի սեւագիրը, երրորդ վերջին տարբերակը՝ մաքրագիրը¹⁶: Իսկ այս հրատարակությունն ըստ էության նմանակում-վերջնականացնում է Վերքի ձեռագրագիտական, բնագրագիտական քննաբանության համագիրը, շրջանառության մեջ մտցնում միջամտություններից զերծ, անաղարտ արժվանական բնագիրը, հնարավորություն ընձեռում հետեւելու արժվանական բնագրի կառուցմանը, հեղմանը, Դեմիրճյանի բնութագրմամբ՝ հորդումին¹⁰:

Վերքի սկզբնաղիղ գործառությունը նոր գրականության պատմության համապատկերում անշուշտ հանգրվայնանում է լեզվական հեղափոխությամբ եւ երիցս իրավացի էր Դակոբ Օշականը, երբ արձանագրում էր. «Նորութիւն էր իր գործը իբր ոգի, ծգտում եւ արուեստի ըմբռնում, բայց մանաւանդ վճռական է անկա շատ վճռական հարցի մը մէջ, որ լեզուական է այս անգամ»²⁰:

Ահա եւ սույն հրատարակությամբ, Գուրգեն Գասպարյանի բնագրագիտական աշխատանքի շնորհիվ, կարելիություն է ստեղծվել «Այս երգեցիկ գրքի երգանման ծային»²¹-ն ըստ ամենայնի հետեւելու:

Բնագիր պատրաստողը, առաջնորդվելով արժվանական բնագրի նույնական, անխաթար փոխանցմամբ (հրատարակության պատրաստելուն), ըստ վեպի ինքնագիր-մաքրագրի վերականգնել է բազմաթիվ հատվածներ արձակի, որոնք, օրինակ, այս տպագրությանը նախորդող հրատարակության մեջ չափածոյի էին տողատվել, վերականգնել է պարբերությունները, հավելել կազմողների զանցումները, հանել նույն կազմողների տարբեր տեսակի միջամտությունները, մեկնելով արժվանական ուղղագրությունից եւ կետադրությունից՝ վերականգնել նաեւ սրանք: Ասել է թե՛ բնագիրը կազմելիս, Գասպարյանն՝ իբրեւ բնագիր եւ հրատարակված տարբերակի միջնորդ, իր միջնորդության առաքելությունը տեսել է բացառապես ինքնագրի մաքրում, անաղարտ փոխանցման մեջ: Այսպիսով՝ եւս մեկ անգամ կրկնենք՝ սույն հրատարակությամբ հայտնին դարձրել նորահայտ: Դեց այս, առաջին անգամ Վերքի բնագրի նույնական հրատարակությունն է խնդրող առարկա գրքի ամենակարեւոր հանձնառությունը եւ միաժամանակ արժեքավորությունը:

Աշխարհաբարով գեղարվեստական գրականություն ստեղծելու լեզվական դրսեւորումների, արտահայտությունների, որոնումների ողջ գործընթացն, այսպիսով, իր բոլոր երեսակներով ակնդետ բացվում է ընթերցողի եւ հետազոտողի առջեւ, ինչն էլ Գասպարյանին իր ձեռագրագիտական-բնագրագիտական հետազոտության մեջ հետեւյալ եզրակացության է հանգեցնում. «Փաստորէն «Վերք Դայաստանի» վեպը, լինելով աշխարհաբարի առաջին մեծածաւալ գեղարո-

լեստական ստեղծագործությունը, ապացուցեց աշխարհաբարով գեղարու-
լեստական տեքստ ստեղծելու հնարաւորութիւնը»²² (ընդգծումը՝ Գուրգեն
Գասպարյանի):

Ահա այսպես, հետեւելով Վերքի բնագրին, նկատվում է, թե ինչպես է Արով-
յանը խոսակցական լեզվից գոյավորել գրական լեզվի այն հիմքը, որ ետաքով-
յանական շրջանում աշխարհաբարի հաստատման եւ բյուրեղացման հիմքն էր
լինելու: Նկատում ենք բնագրի-երկու շերտերի «առավելագույն հաղորդակցե-
լի» եւ «առավելագույն գեղարվեստական»²³-ի պարզապես վիրտուոզ համադ-
րությունն արովյանական համագրում, նկատում չափածո հատվածների կա-
ռուցման ընդգծված պատճառականությունը²⁴, կազմողի մեկնաբանություննե-
րով ամբողջապես պատկերացմուն գրողի ուղղագրության, կետադրության
մասնահատկությունները:

Գասպարյանն իր բնագրագիտական-ծեռագրագիտական ներածական-ու-
սումնասիրությունն ավարտում է Վերքի ինքնագրերի մանրամասն ներկայա-
ցում-նկարագրությամբ:

Իբրեւ ամփոփում-եզրակացություն կրկնենք, որ Վերքի սույն հրատարակու-
թյունը կարելու է չափազանց շահեկան ձեռքբերում է:

ԾԱՆՈԹՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաչատուր Արովյան «Վերք Չայաստանի. ողբ հայրենասիրի. պատմական վեպ բա-
ժանեալ յերիս մասունս ի Խ. Ապովյանէ, վերատեսչէ արքունական նահանգական ուսում-
նարանին՝ որ ի Տփլիսի», բնագիրը հրատարակութեան պատրաստեց Գուրգեն Գասպա-
րեանը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Պիոն Յակոբեանի, Երեւան, Գրականու-
թեան եւ արուեստի բանգարանի հրատարակչութիւն, 2004, 424 էջ:

2. «Վերք Չայաստանի»-ն բեմի վրա», տե՛ս Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի ժողո-
վածու տասը հատորով, հատոր տասներորդ, Երեւան, Չայսեփորատ, 1962, էջ 181:

3. Վերջին շրջանում Արովյանին նվիրված ուսումնասիրություններից անպայմանորեն
պետք է առանձնացնենք ակադեմիկոս Սերգեյ Սարիմյանի «Վերք Չայաստանի» վեպի
կառուցվածքը» եւ հատկապէս՝ «Վերք Չայաստանի» վեպի պոետիկան»:

4. Նույն տեղում, «Վերք Չայաստանի» վեպի պոետիկան», էջ 118:

5. «Խաչատուր Արովյանի գրական ժանրերը», տե՛ս Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողո-
վածու վեց հատորով, հատոր ութերորդ, լրացուցիչ, Երեւան, Չայսեփորատ, 1963, էջ 220:

6. Օրինակ՝ Աղայանի, Պոռչյանի կողմից Արովյանի ստեղծագործության փորձընկա-
մամբ ըստ էության հայոց նոր գրականության անիվը թափ առավ: Ավելին, Դեմիրճյանի
նմանողությամբ երկրորդենք, որ իրենք վեպի փորձընկալմամբ գտան իրենց: Վաղուց ան-
տի գրականության պատմության կողմից արձանագրված, մեկնաբանված իրողություն:

Ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել, որ Արովյանի խնդրո առարկա
վեպով պայմանավորված ըստ էության նույն երեւույթը նկատում ենք այսօրվա գրակա-

նության մեջ: Կուզեինք վկայակոչել այսօրվա մեր արձակի ամենատաղանդավոր հեղինակին՝ Լեւոն Խեչոյանի բանավոր նկատումները Արվյանի երեւոյթի եւ մասնավորապէս **Վերքի** առիթով: Նրա հմուտ եւ նուրբ դիտարկումները, որի ականջալուրն էինք, ըստ էության փորձընկալման նույն երեւոյթն են արձանագրում: Հար եւ նման էր բանաստեղծ Տիգրան Պասկեւիչյանի պարագան «Վենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» շարքի հաղորդումներից մեկի ժամանակ ունեցած ելույթում:

7. Ինքնին հասկանալի է, որ **Վերքի** ամբողջական (լիակատար) փորձընկալումը պարտադրում է լրջագույն պատրաստվածութուն:

Վերք կարդալը առնվազն վերջին 50-70 տարիների ընթացքին կատարյալ փորձություն է դարձել հատկապէս դպրոցական-ուսանողական շրջանակներում: Ընթերցման «դժվարությունը» նշված կուտակումների ամայթով, շատ հաճախ կուտակումների նախապատրաստության բացակայությամբ է պայմանավորված: Ստեղծագործության համառոտված-դյուրինացված տարբերակը, կարծում ենք, այս մտահոգությամբ էր ժամանակին ստեղծվել, սակայն իբրեւ նախապատրաստություն առկախ մնացել, որովհետեւ միայն երկի նախաձեռնութեամբ հասկանալի մղումով ստեղծված դյուրինացված տարբերակը ազուցվում էր երկի արժեքայնության-մեկնաբանության տարողունակ դաշտին: Իսկ դյուրինացված տարբերակից դուրս մնացած բնագրային շերտերը ստեղծագործության համարժեք ընկալումը եւ ընթռնումը չէին ապահովում, եւ արդյունքում վեպը մնում էր անհասկանալի:

8. Տե՛ս **Վերքի** վերջին հրատարակության Հակոբյանի «Խաչատուր Աբովեանը եւ նրա «Վերք Չայաստանին» առաջաբանը, էջ 30:

9. Սարինյանը **Վերքի** գեղարվեստական կառուցվածքը քննաբանում է իբրեւ դրույթի, հակադրույթի եւ համադրույթի միասնություն: .

10. Պատահական չէ, որ, օրինակ, Հակոբ Օշականը **Վերքի** պատմական առաքելությունը եւ ժամանակակից դերակատարությունը փաստելիս նշում է, որ ստեղծագործությունը «...ընթերցողը կրկնմապես երախտաւորող, գրականէն ալ դուրս սա վայելքին մատուցումով...» է առանձնանում:

Տե՛ս Հակոբ Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, չորրորդ հատոր, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1956, էջ 93:

11. «Այստեղ Չայաստան աշխարհն է իր տարերային-տիտանային պէզաժներով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշտութիւն, օրատորիաներ», - գրում է Իսահակյանը:

Սեքերերում ըստ «Վերք Չայաստանի» խնդրո առարկա հրատարակության, էջ 49:

12. Կառուցաբանական առումով արեւելյան եւ արեւմտյան վիպագրական շերտերը կատարյալ մոնոլիտային սիմֆոնիզմի հասցրած համադրությունների շրջանակը արքվանագիտությունը բազմիցս փաստել է՝ Դերենիկ Դեմիրճյան, Սերգեյ Սարինյան:

13. Հիրավի մոտենում ենք Արվյանի հոբելենական շրջանին. 2008-ին «Վերք Չայաստանի» առաջին տպագրության 150 ամյակը, 2009-ին՝ գրողի 200 ամյակը:

14. Այս մասին հանգամանորեն տե՛ս խնդրո առարկա հրատարակության «Մատենագիտական տեղեկութիւններ» (էջ 420-422) բաժինը:

15. Ի դեպ, արվամական հորեյամներին սեմին ակտիվացել են մերձարվամական և մերձգիտական մտայնություններն ու դեմքերը: Զգիտես ինչու, շրջանցելով ակադեմիական գիտությունը, ոմանք, կարծում ենք՝ պատեհապաշտական նկատառումներից դրդված, ամեն ջանք գործադրում են Արվամին 200-ամյակը տոնել 2005-ին՝ ոչնչով չհիմնավորված հայտարարություններ անելով, թե մեծանուն գրողը ծնվել է 1805-ին: Վատապաշտ արվամագետ Պիոն Զակոբյանը տակավին 1997-ին հրատարակած «Խաչատուր Արվամին կենսագրության առեղծվածները» իր մեծագրության «Ծննդյան թվականը» եւ «Վերստին Արվամին ծննդյան թվականի մասին» ուսումնասիրություններում (տես հիշատակված մեծագրության 25-51 եւ 52-69-րդ էջերը) տակավին հայտնի փաստերի շրջանառությամբ Արվամին ծննդյան թվականը համարում է 1809-ը:

«Գրեք ենագրությամբ» համակվածները հաճախ անեկդոտիկ-զավեշտական բաներ էլ են ասում եւ գրում: Վերքի այս հրատարակության ընագիրը պատրաստած Գուրգեն Չապարյանը տողերիս հեղինակին պատմել է, որ դրանցից մեկը, ՉԱԹ-ի իր աշխատասենյակում գիրքը թերթելիս, ըստ երեւոյթին հրատարակության ավանդական ուղղագրությունից մեկնելով, լրջորեն-զարմացած հարցրել է իրեն՝ Արվամը արեւմտահայերե՞ն է գրել, Վերքի ձեռագիրը արեւմտահայերե՞ն է:

Ավելի լուրջ: Կարծում ենք՝ գրողի 200-ամյակի եւ Վերքի տպագրության 150-ամյակի հորեյամներին ընդառաջ հիմնալի կլինի հրատարակել զոմե մի մեծագիր ընտրանի Արվամին գրական ժառանգությունից, ինչպես նաեւ Ֆրիդրիխ Պարրոտի «Ծանապարհորդություն դեպի Արարատ» ուղեգրություն-հուշագրությունը, որ գերմաներենից թարգմանել է Արա Սաքելյանը: Գիրքը վաղուց պատրաստ է տպագրության եւ սպասում է իրատարակչին:

16. Տես ստեղծագործության ներկա հրատարակությունը, էջ 15:

17. «Մանդարտ»-ը մեր շարադրանքում բոլորովին արժեքորոշ նշանակությամբ չենք կիրառում: Սնշուշտ Վերքի բոլոր հաջող հրատարակությունները (հատկապես 1881-ին Պիոն Զակոբյանի աշխատասիրությամբ, «Ռուսանողի գրադարան» մատենաշարով տպագրվածը), անկախ տպագրության նպատակից (օրինակ՝ զուտ ուսուցողական, ճանաչողականից) հույժ կարեւոր, շահեկան եւ օգտակար են եղել եւ ընթերցողական եւ թե՛ արվամագիտական շրջարկների համար:

18. Սյս եւ Վերքի՝ ստեղծագործական պատմության մանրամասն ուսումնասիրությունը տես նրա «Խաչատուր Արվամին Վերք Դայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» (Երեւան, ԴԱՍՈ ՉԱ հրատարակչություն, 1955) մեծագրության մեջ:

19. Տես «Խաչատուր Արվամին գրական ժանրերը», էջ 219:

20. Յակոբ Օշական, Ձուգակչի աղբալախայ եւ արեւմտահայ գրականութեան, Պէյրուս, Դամագպայինի Վահե Սեթեան տպարան, 1989, էջ 92:

21. Եղիշե Զարեան «Ղեպի Լյառը Մասիս», Երկերի ժողովածու, Երեւան, ԴԱՍԴ ՉԱ հրատարակչություն, 1968, հատոր 4-րդ, էջ 219:

22. Տես «Վերք Դայաստանի», ներկա հրատարակությունը, էջ 6:

23. Նույն տեղում, էջ 8:

24. Չապարյանն այս հանգամանքը իր ներածական-ուսումնասիրության մեջ մեկնաբանում է կարելի մանրամասնություններով, տես էջ 10-11: